**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 9**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**
**20.12.2021Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ **Տ.Եփրեմյան, Ն.Վարդանյանը, Գ.Երիցյանը,Ա.Փանոսյանը.**

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
***Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը , Գ.Ա֊ֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***
***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

1. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
4. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
9. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
10. Չարենցավան համայնքի 2022 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
11. Չարենցավան համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին:
12. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին:
13. Չարենցավանի համայնքապետարանի և «ՄԵԳԱԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը լուծելու մասին:
14. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 17-ի թիվ 70 որոշման 3-րդ հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -10** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***1 . Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:***

***/ՀԵԿ.Բ.Բարսամյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքում 2022 թվականին կիրառվող տեղական տուրքերի դրույքաչափերը:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:***

***/ՀԵԿ.Վ. Չիլինգարյան/***

Հաշվի առնելով, Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1-րդ հոդվածի համաձայն տեղական տուրքերը և վճարները հանդիսանում են համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտներ, ***առաջարկում եմ*** սահմանել Չարենցավան համայնքում տեղական վճարների 2022 թվականի հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***3. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:***

***/ՀԵԿ.Ս. Մուրադյան/***

1. Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով առաջարկում եմ՝ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 2022 թվականի հունվարի 1-ից ամսական 400000ՀՀ դրամ, իսկ հուլիսի 01-ից՝ ամսական 460000ՀՀ դրամ:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***4. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:***

***/ՀԵԿ.Ս. Մուրադյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով՝ ***առաջարկում եմ,*** հաստատել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 1,2:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***5. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:***

***/ՀԵԿ.Ս. Մուրադյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի,դրույթներով,***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված NN 1-15 և N1.1-15.1:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***6. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:***

***/ՀԵԿ.Գ.Ա$ֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 54-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեն:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***7. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:***

***/Զեկ.Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Առաջարկում եմ՝ քանի որ բյուջեն պետք է հավասարակշռված լինի, ծախսերում անհրաժեշտություն է առաջանում կատարել փոփոխություններ:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***8. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ.Գ.Աֆյան/***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ., 21 շենքի 8 բն. բնակիչ ***Արթուր Փամբուխչյանի*** 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 4849-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ., 18 շենքի 15 բն. բնակիչ ***Արմեն Նալթակյանի*** 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 5305-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ., 29 շենքի 9 բն. բնակիչ ***Անդրանիկ Պետրոսյանի*** թիվ 5027-16 2021 թվականի նոյեմբերի 11-ի և Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի 23 փող., 12 տան բնակիչ ***Հայկ Հարությունյանի*** 2021 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 5151-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և

ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝, ***առաջարկում եմ.***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Արթուր Փամբուխչյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Անդրանիկ Պետրոսյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Հայկ Հարությունյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Արմեն Նալթակյանին,***

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***9 Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:***

***/Զեկ.Հ.Ղազանչյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 19-ի թիվ 8-Ն որոշման՝՝***առաջարկում եմ,*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումների՝

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵՆ | ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ | ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ | ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ամալյա Նազարյան | 6-25-15 | 12000000 | Սեփականություն | Անհատույց |
| 2. | Էմմա Խաչատրյան | 4-2-7 | 8860000 | Սեփականություն | Անհատույց |
| 3. | Ռուզաննա Տոնյան | 2-1-7 | 5660000 | Սեփականություն | Անհատույց |
| 4. | Էմմա Բայունց | 6-13-33 | 8915000 | Սեփականություն | Անհատույց |
| 5. | Էմմա Սուքիասյան | 1Ա-4-87 | 7200000 | Սեփականություն | Անհատույց |
| 6. | Սեդա Թոխյան | 2-1-1 | 4000000 | Սեփականություն | Անհատույց |
| 7. | Ռուբիկ Առաքելյան | 3-37-32 | 11150000 | Սեփականություն | Անհատույց |
| 8. | Վալերի Մովսիսյան | 1-7-9 | 8100000 | Սեփականություն | Անհատույց |

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***10. Չարենցավան համայնքի 2022 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:***

***/Հեկ.Վ. Չիլինգարյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առաջարկում եմ հաստատել Չարենցավան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված N N 1.2 ի:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:
**Կողմ- 10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***11. Չարենցավան համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին:***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով՝, ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավանի համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման, համաձայն նախագծի:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***
Քվեարկության եմ դնում որոշումը:
**Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***12. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին:***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, ***առաջարկում եմ.*** 1. թույլատրել 5 տարի ժամկետով համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 10-րդ Ա շենքի թիվ 4 շինությունը /220.05 քմ մակերեսով տարածքը/ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ՈՂՋ ՄՆԱԼ ԵՎ ԱՊՐԵԼ» ռազմահայրենասիրական, ռազմամարզական, բարեգործական հասարակական կազմակերպությանը ռազմահայրենասիրական դաստիարակության ուսումնական կենտրոն ստեղծելու նպատակով: Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի «Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին» թիվ 53 որոշումը:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>***
Քվեարկության եմ դնում որոշումը:
**Կողմ- 10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***13.Չարենցավանի համայնքապետարանի և «ՄԵԳԱԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը լուծելու մասին:***

Ղեկավարվելով «Գնումների մասի» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 որոշման 58-րդ կետով,***առաջարկում եմ.*** տալ համաձայնություն Չարենցավանի համայնքապետարանի և «ՄԵԳԱԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև կնքված հոսանքի տրանսֆորմատորի մատակարարման «ՉՀ-ԳՀԱՊՁԲ-2021/9» պայմանագիրը լուծելու համար, նկատի ունենալով, որ Պատվիրատուի մոտ դադարել է գոյություն ունենալ գնման պահանջ և արձանագրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպք:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>***
Քվեարկության եմ դնում որոշումը:
**Կողմ- 10 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

*Լսեցին.*

***14. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 17-ի թիվ 70 որոշման 3-րդ հավելվածում փոփոխություն կատարելու մասին:***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, առաջարկում եմ 1.Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 17 «Չարենցավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 70 որոշման 3-րդ հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1.1 «Հաստատության գտնվելու վայրն է՝ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, քաղաք Չարենցավան Շինարարների փողոց թիվ 4 շինություն»:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***
***Քվեարկության եմ դնում որոշումը:***

**Կողմ- 10 դեմ-0 ձեռնպահ-0**

**Բաբայան Նարեկ**

**Բաբայան Վալերի**

**Գասպարյան Անատոլի**

**Գասպարյան Մելիք**

**Գրիգորյան Հակոբ**

**Դավթյան Կարեն**

**Խլղաթյան Արսեն**

**Վարդանյան Նորայր**

**Վարդանյան Սարգիս**

**Պողոսյան Մնացական**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

**Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը** _____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**